

Հ Ր Ա Մ Ա Ն N 248-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

«16» ՄԱՐՏԻ 2020 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ


ՎԱԶԳԵՆ ՀԱՄԼԵՏԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՊՐՈՔԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 12-3-22.9-Ղ5-1)
ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 7-րդ կետը, ինչպես նաև Պրորբացիայի ծառայության Կոտայքի մարզային մարմնի պետի (ծածկագիր՝ 12-3-22.9-Ղ5-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2020 թվականի մարտի 16-ի եզրակացությունը և Վ. Առաքելյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վազգեն Համլետի Առաքելյանին 2020 թվականի մարտի 17-ից, 12 ամիս փորձաշրջանով, նշանակել Պրորբացիայի ծառայության Պրորբացիայի ծառայության Կոտայքի մարզային մարմնի պետի (ծածկագիր՝ 12-3-22.9-Ղ5-1) պաշտոնում:
2. Փորձաշրջանի ընթացքում Վ. Առաքելյանի փորձաշրջանը համակարգող նշանակել Պրորբացիայի ծառայության Արագածոտնի մարզային մարմնի պետ (ծածկագիր՝ 12-3-22.4-Ղ5-1) Լյուդվիգ Ասատրյանին:
3. Աշխատավարձը սահմանել՝ 212 309 ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ժամանակավոր պաշտոնակատար՝



ՆԱՐԵԿ ՂԱԶԱՐՅԱՆ